ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
1983

Ա) Ելեւմտական

	Ի. Շ.
1. — *Նոր գիրքերու և թերթերու գնում*	82,225.85
2. — *«Սիոն»ին՝ փոխանակուած թերթերու հաշուոյն*	510.00
3. — *Գիրքերու և թերթերու կազմին*	8,900.00
4. — *Ամսականք*	51,000.00
5. — *Աշխատավարձք*	8,760.00
6. — *Գրենական պիտոյք*	10,655.19
7. — *Ընթացիկ ծախքեր և տանին պիտոյք*	19,187.00
8. — *Դրաշմաթուղթ և թղթատար*	45,030.00
9. — *Հեռախօս*	11,557.50
10. — *Մանր նորոգութիւններ*	3,750.00
Գումար՝	241,575.54

Բ) Նոր գիրքեր եւ թերթեր

	Գնուած	Նուէր ստացուած	Գումար
1. — *Հայերէն*	293	320	613
2. — *Անգլերէն*	65	135	200
3. — *Ֆրանսերէն*	17	32	49
4. — *Արաբերէն*	2		2
	377	487	864

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ
Քարտուղար

● *Եշ. 1 Մարտ. — Կէսօրէ ետք, Յունաց Պատրիարքարանի Թանգարանի բացման ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Սեւան Վրդ. և Տիար Գ. Հինդլեան: Թանգարանը կը գտնուի իրենց Ս. Նիկողայոսի վանքին կից:*

● *Բշ. 5 Մարտ. — Մեծ Պահոց առաջին օրուան առթիւ, ժառանգ. սաներ և Սարկաւագներ օրական պտոյտի գացին Երիքով:*

● *Բշ. 12 Մարտ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Վատիկանի Արեւելեան Եկեղեցիներու խորհուրդի Վարիչ Հայր Տիւփրէ:*

● *Դշ. 14 Մարտ. — Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. և Հոգշ. Տ. Գուսան Աբղ. ներկայ գտնուեցան Յոյն-Կաթոլիկներու «Մշակութային Կեդրոնի» բացումին, ուր Գերմանացի Փրոֆէսէօր մը* slide*ներով նմոյշներ ցոյց տուաւ արեւելեան ժողովուրդներու մանրանկարչական արուեստէն, որոնց մէջ առիւծի բաժինը գրաւած էին հայկականները: Գերշ. Լութֆի Լահհամ Եպս. մեծ հիացումով արտայայտուեցաւ հայ գրչագրական արուեստի մասին:*

● *Կիր. 25 Մարտ. — Յունաստանի Անկախութեան 163րդ տարեդարձի առթիւ,* American Colony*ի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Տ. Գարեգին և Տ. Կիւրեղ Սրբազաններ, Տ. Սեւան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան:*

digitised by A.R.A.R.@